ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Հանրածաւալ կամ Հանրակիր՝ ախտերու վրայ պեղեկութիւն։

ՀԱՆՐԱԿԻՐ կամ հանրածաւալ ախտք կ'ըսուին ան տեսակ հիւանդութիւնները որ մի և նոյն պատճառէն առաջ գալով՝ ու մէկէն մէկալին անցնելով մէկ ատենուան մէջ, ամենուն վրայ ալ գրեթէ նոյն միասակար ազդեցութիւնները կ'ընեն։ Երկու կը բաժնուին աս հիւանդութիւնները. ոմանք կ'ըսուին փոխադրական[2], ոմանք ալ ապականարար[3]։ Փոխադրականները՝ որ մարմնոյ ներքին ապականութենէն առաջ կուգան, քսուելով կը պլշտրկուին՝ ինչպէս ժանտախտը. իսկ ապականարար տեսակէն բռնուողներուն քսուիլը թէպէտ միաս չիտար, բայց անոնց շունչը օդը ապականելով, թէ որ նոյն ապականած օդը առնելու ըլլայ մէկը՝ ինքն ալ նոյն հիւանդութեամբ կը պլշտրկուի. և աս զանազանութիւնը գիտնալը շատ հարկաւոր է, որպէս զի թէ որ այսպիսի հիւանդութիւն մը պատահելու ըլլայ՝ իմացուի թէ ո՞ր տեսակն է, և ըստ այնմ զգուշութիւններ ըլլուի կամ ան տեղէն հեռացուի։ Ան զի թէ որ առաջին տեսակը ըլլայ, դիւրին է դպչելէն զգուշանալով՝ հիւանդին քով բնակիլը. իսկ թէ որ ապականարար տեսակն է, պէտք է տեղն ալ թողուլ ու հեռանալ։ Այսպիսի նիւթի մը գիտնալու հարկաւորութիւնը տեսնելով, մանաւանդ հիմայ որ տեսակ տեսակ հիւանդութիւններ տարածուած են զանազան կողմեր, և որպէս զի աս հիւանդութիւնները իրարու տեղ դնելով չշփոթեն ու չշփոթին տեղացիք, քիչ մը աւելի պարզ կերպով բացատրենք աս ախտերուն տեսակները։

Ընդհանրապէս դպչելով պլշտրկուած փոխադրական հիւանդութեանց կարգը կը սեպուին ծաղկի[1] հիւանդութիւնը, սաստիկ տաքցուցիչ ջերմին մէկ տեսակը, արևելքի ժանտախտը, ջրավախութիւնը[2], գոնջութիւը[3] և ուրիշ ասոնց նման մէկ քանի հիւանդութիւններ։ Իսկ ապականարար տեսակէն կը սեպուին ընդհատ ջերմերը, հանրական թանչերը[4] և այլն։ Իսկ քոլերան, դեղնացաւը[5] կամ դալուկը, բորբոսային[6] տենդը և այլն, ոչ մէկուն և ոչ ալ մէկալին կարգը կրնան սեպուիլ, հապա աւելի երկուքին մէջ մէկ բան մը։ Ան ան զի աս տեսակ հիւանդութիւններէն բռնուողներուն չորս կողմի օդը ապականելով ալ կրնայ մարդ հետերնին բնակիլ քովերնէն քիչ մը հեռու կենալով։

Ա՛եծ սխալմունք և նախապաշարմունք մըն է կարծելը թէ «կորոնը» ըսուած ախտը, պարանոցի խոյլը[7], լուսնոտութիւնը[8], թոքացաւութիւնը[9] փոխադրական ախտեր են. և աս կարծեաց հիմը ան կրնայ սեպուիլ որ իբր թէ մի և նոյն ընտանեաց մէջ շատերը կ'ունենան նոյն հիւանդութիւնը։ Բայց դիւրաւ կ'իմացուի աս կարծեաց ծռութիւնը թէ որ մտածելու ու դիտելու ըլլանք որ մի և նոյն ընտանեաց մէջ երբոր ամէնքն ալ նոյն սկզբամբ կը գործեն ու կը վարուին, կ'ուտեն ու կը խմեն, ամենևին զարմանք չէ որ մի և նոյն տեսակ հիւանդութեանց ալ ենթակայ ըլլան, որով չկարծենք ալ թէ նոյն ախտերը տարափոխիկ են։ Ինքնաղաց արիւնն ալ շատ հեղ զաւկներնուն հիւանդութեանը պատճառն է.

1 Եւրոպացիք աս տեսակ հիւանդութեանց յունական բառով Épidémie կամ Maladie épidémique (Επίδημος νόσος) կ'ըսեն։

2 Գղ. Contagieux. 3 Գղ. Miasmes.

1 Ձիւտ։ Գղ. Petite-Vérole. Իտ. Vajuolo.

2 Դոսոսոսղոսոտ։ Գղ. Hydrophobie. Իտ. Idrofobia.

3 Գէնտ։ Գղ. Teigne. Իտ. Tigna.

4 Գան իսուլը։ Գղ. Dyssenterie. Իտ. Dissenteria.

5 Սարըսըգ։ Գղ. Fièvre jaune. Իտ. Febbre gialla.

6 Գղ. Fièvre putride. Իտ. Febbre putrida.

7 Սըրոֆա։ Գղ. Scrofules. Իտ. Scrofola.

8 Թոսիարըգ։ Գղ. Epilépsie. Իտ. Epilessia.

9 Ամ ճիյեր մարաղը։ Գղ. Phthisie pulmonaire. Իտ. Tisi polmonale.

և այնչափ է աս բանիս ստուգութիւնը՝ որ եթէ երկու եղբարք՝ որոնց ծնողքը թոքացաւ ունենան, ծնանելնուն պէս մէկմէկէ բաժնուելու ալ ըլլան երկուքն ալ դարձեալ նոյն ախտին տէր կ՚ըլլան, թէ որ մասնաւոր կերպով մը նոյն ախտէն ազատելու համար ինչ զգուշութիւններ որ կը պահանջուի չըլլայ անոնց վրայ։ — Դարձեալ ծուռ կարծիք է հաւտալը թէ Միլիարայ[1] կամ Կարմրացաւ ըսուած հիւանդութիւնը և ուրիշ ամէն տեսակ մորթային ախտերը տարափոխիկ են. վասն զի Աստուծոյ մասնաւոր նախախնամութեամբը՝ տարափոխիկ ախտերը որչափ որ ռամիկը կը կարծէ, անկէց հարիւր անգամ աւելի քիչ են. և այսպիսի սուտ կարծիքներէ ու վախերէ կը պատահի շատ անգամ՝ որ կը զգուշանայ մարդ ձեռքէն եկած օգնութիւնը ընելու այնպիսի խեղճերուն, որ աս տեսակ փոխադրական կարծուած հիւանդութեամբ կը մնան երեսի վրայ։

Առաջին տեսակը ընդհանրապէս աւելի ուժով և կորովի մարդկանց կը վնասէ, իսկ ապականակիր կամ ապականարար տեսակէն վնասուողները աւելի տկար, աղքատ և նորաբոյժ հիւանդները կ՚ըլլան. իսկ գինեմոլները, շատակերները, աղտոտ մարդիկները, վախկոտները, նախանձոտները ամէն տեսակ հիւանդութենէ աւելի՝ աս երկու տեսակ հիւանդութեանց ենթակայ կը սեպուին։

Համրակիր ախտերուն դէմ տէրութիւնք շատ աղէկ օրէնքներ հաստատած են, մասնաւոր պահապաններ դնելով, արգելանոցներ ու մաքրարաններ շինելով. ապականարարներուն դէմ ալ հոտած ջրերը ու ճահիճները ցամքեցնել տալով որ օդը չապականեն. բրինձ մշակելու տեղերուն կարգ դնելով, կերակրեղինաց գինը որոշելով, և այլն և այլն։

Սակայն ինչ և իցէ ատեն և ուր որ ըլլայ՝ աս անտանելի համրակիր ըսուած ախտերուն մէկ պզտի նշանն ալ թէ որ սկսի երևնալ, շատ օգտակար է որ ամէն մարդ ալ լաւ գիտնայ աս ետևի դրած զգուշութիւնները,

Ա. Ըստ կարի փախչիլ և զգուշանալ աղտոտ մարդկանցմէ ու տեղերէ։

Բ. Տէրութեան հրամայած ամէն նախահոգ զգուշութիւնները ընել։

Գ. Իւրաքանչիւր մարդ ըստ կարի թէ ինքզինքը և թէ իր տունը մաքուր պահէ։

Դ. Բժիշկներուն տուած խորհուրդներուն ուշադիր ըլլալով պահել։

Ե. Ամենեւին պէտք չէ շատ վախնալ և ոչ ալ սաստիկ յանդուգն ըլլալ, և այնպէս բռնէ մարդ ինքզինքը որ ոչ մարսողութեան և ոչ ալ ուրիշ կենդանական գործարանաց մէկուն պզտի այլայլութիւն մը բերէ։

Զ. Իսկ անոնք որ կամ՚ի պաշտօնէ և կամ՚ի մարդասիրութենէ այսպիսի հիւանդաց օգնութեան կ՚երթան ու անոնց մէջ կը մտնեն, անկէ վերջը պէտք է մասնաւոր կերպով զգուշանան առողջներուն հետ ընտանութիւն ընելէն, որպէս զի չըլլայ թէ անոնց ալ նոյն հիւանդութիւնը պլըշտըկեն, շատ անգամ մաքուր օդի մէջ պտըտին, բերաննին ժողվուած լորձունքը թքնեն և այլն։

[1] Իտ. Migliara. Գղ. Fièvre miliaire.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Շուն։

ԸՆՏԱՆԻ կամ թէ ըսենք սնական կենդանիներուն մէջ ամենէն վայրենին բաղն է, թէպէտ և աշխարհիս ամէն կողմերն ալ կը գտնուի։ Երկայն ճամբայ կ՚ընէ քալելով. ընդարձակ ծովեր կ՚անցնի, ամէն կլիմայի կը դիմանայ ու ուր և իցէ բան կ՚ուտէ։ Շունը զարմանալի յատկութի մը ունի որ դիւրաւ վայրենութիւնը կը կորսընցնէ ու կ՚ընտանենայ, բայց աւելի դիւրութեամբ